ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԽԱԹԱԲԱԼԱ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1911, Շաբաթ, Սեպտեմբերի 24-ին. Թիֆլիս. №39.

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Փրկութեան ճանապարհը ես ո՞րտեղ գտնեմ.

ЛИТ. С. БЫХОВА

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1911 թ.

VI Տարի

ԽԱԹԱԲԱԼԱ

VI Տարի

Երգիծաբանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի

ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ԱՄԵՆ ՇԱԲԱԹ ԱՆԽԱՓԱՆ

Պաշտօնական օրգան պետական, ազգային, հասարակական և օտարազգի բոլոր մեծ և փոքր, յայտնի և անյայտ, պիտանի և անպիտան, փրկիչ և գլխիչ, անկեղծ և կեղծաւոր գործիչ-կորզիչների և խայտառակիչների։

Անհրաժեշտ թերթ բոլոր բնտանիքների համար

«ԽԱԹԱԲԱԼԱՆ» շատերին ծիծաղեցնում է, շատերին էլ ցաւեցնում, բայց ոչ ոքի հետ ոչ բարեկամ է և ոչ թշնամի։ Խմբագրին կարելի է տեսնել, երբ քէֆիդ ուզի։

Հասցէն՝ Тифлисъ Музейный пер., редакція „ХАТАБАЛА“.

Արտասահմանից՝ Tiflis Caucas Redaction «Khatabala»

Խմբագիր-հրատարակիչ՝ Աստ. Երիցեան

«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ» ԲԱԺԱՆԵԳԻՆՆԵՐԸ

Տարեկան	5 ր.
Կէս տարին	3 »
Երեք ամիսը	1 » 50 կ.
Ամիսը	— 50 »
Թիֆլիսում տարեկան	4 » — »

Մեր թերթի բաժանորդներին «Սուրհանդակ» ամենօրեայ թերթը ուղարկում ենք պակաս վճարով։

100 տարով բաժանորդագրուել ցանկացողին 75 % զեղչ։

Զրի կարդացողներին պէտք է նկարենք գլխիվայր։

«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ» ՕՐԱՑՈՑԸ

1911 ՍԵՊՏԵՄԲԵՐ 30 օր

24

Суббота ՇԱԲԱԹ Шабатъ

Լուսնի 12

25 (կիր.) Տօն անդորձ կանանց և օրիորդաց, որ այսօր առաւօտեան վաղ մատակ ծամելով, բամբասելով և կամ քուչէք չափելով դրաղին. իսկ դիշերն էլ «собранія» կրգնան։

26 (բ. շ.) Սրբոյն Սեդրաքի Մանդինեան, որ եաթէն բռնեց զՅովհաննու Մալխասեան, բայց ոչ կարաց սրա օխտից դալ։

27 (գ. շ.) Ցիշատակ տարեդարձի անխելքութեան հայոց մեծոյ—առաջնորդաց։

28 (դ. շ.) Պանք.—մտքով վերածնուել թոյլատրելի է։

29 (ե. շ.) Տօն սրբոյն գիւղատնտեսից մերոյ Ալէքսանդրի Քալանթարի, ուստի Աշոտի Աթանասի, որք ջանացին վասն իրենց բէկլամ անելով—բեղբեցուցին զխալխ. իսկ իրենք ոչ բեղարան։ Ամէն։

30 (ուրբ.) Տարեդարձ խոստմանց մերոց պարտապանաց, որք խոստանան զպարտիս իրենց տալ—մենք հաւատամք, բայց ոչ սատանամք։

Տոմարագէտ և օրացոյցապետ

Աղրոսիոս արք-վարդապետ.

ԼՈՒՍՈ ԴԻՇԵՐՆԵՐԻ ԻՄ ՄՏՈՐԵՆՔՆԵՐԻՑ

Ես թէև դեռ քսան և վեց տարեկան եմ, սակայն հոգիս զառամել է իմ բազմակողմանի կեանքի հաղար ու մի յաջող ու անյաջող արկածներից. շատ եմ թափառել իբրև զնոող ու տարագիր globe trotter, շատ պատուհասների եմ ենթարկուել այլ և այլ օտար հեռաւոր երկիրներում, բայց դեռ չգիտեմ թէ ինչ է նշանակում ախ ու վաշը։ Այդ հառաչանքների մասին թէև շատ եմ կարդացել բոմանների մէջ, բայց նորից ինձ անծանօթ են մնացել—շնորհիւ այն բանի—որ ես չեմ ուզեցել հասկանալ յուսահատութիւնը, թուլացկոտութիւնն ու կօնվուլսիան։

Երէկ ինձ թւաց թէ ես կարող եմ գրիչներ շինել, որովհետև ամբողջ 10 տարի գրում եմ, բայց այսօր համոզուեցի, որ չեմ կարող և այդպիսով հասկացայ իմ գրիչների միշտ բութ լինելու պատճառը։

Անցեալ օրը ինձ այց եկաւ մատաղ սերընդի կրօնուսոյց—մի բարեկամ քահանայ, որը չխաչակնքեց ճաշից առաջ. երեկոյեան մենք միասին եկեղեցի գնացինք, ուր չխաչակնքեց նաև ժամերգութիւնն սկսելիս... Երբ ես նրան նկատողութիւն արի, նա կարծեց թէ ծաղրում եմ իրեն։

Վաղուց գիտէի որ ձեռքերին նայելով կարելի է ճանաչել մարդուն, ըմբռնել նրա բնաւորութիւնն ու հոգեկան աշխարհը. ինձ թւում էր թէ ձեռքը նոյն ինքը մարդն է որ խօսում է, որովհետև դէմքը կարելի է ամեն կերպ փոփոխել, կարելի է դիմակ դարձնել, բայց ձեռքը երբէք։ Կան, թէև շատ կոպիտ ու կծկուած ձեռքեր, որոնք կարծես ընդունակ են միմիայն բռնութեան ու չարագործութեան. բայց և կան ձեռքեր սիրուն ու քնքոյշ, հին մեղրամոմի գոյնով. և կապոյտին տուող նեարդերով, որոնք տըրուած են լինում Աստուածային սիրոյ, շնորհքի և բարութեան հետ միատեղ և որոնք միշտ քաշող ազդեցութիւն ունին։

Ահա այդպիսի մի զոյգ ձեռքեր սիրեցի ես, որոնք սակայն, վերջը սկսան խեղդել ինձ ու ես ափսոսանքով փախուստ տուի այդ սիրելի ձեռքերից—որոնք մինչ այսօր չեմ կարողանում մոռանալ, մինչ նրանց ուխտադրուժ տիրուհու պիմագերը—վաղուց արդէն ջնջել են իմ յիշողութեան մէջ։

Քնքոյշ և խեղդող. ինչու այդպէս։

Երբ ես իմ կեանքի բարեկիրթ ընկերուհուն ասում էի—թէ չի կարելի գոգնոցով քիթը սրբել, նէ ծիծաղում էր իմ բծախնդրութեան վրայ. իսկ երբ կողմնակի մարդիկ, որոնք իմ կօշիկս չարժէին՝ պատուիրում էին նէրան—դէն ձգել արդէն երկար ժամանակ կրած ու դունատուած գոգնոցը, նէ չնայելով մեր աղքատիկ կացութեանը, լալիս էր ու համաձայնւում...

Ինչու.

Է՛հ, ես շատ քիչ բան գիտեմ դեռ։

Մարիկ

ԱՇԸՂԻ ՆԷՑԵԻՄՆԵՐԻՑ

Այս բուրալից ու ծաղկազարդ
Վայրերի մէջ խրոսված՝
Ես առանց քեզ, այսպէս տրմարդ,—
Դատ եմ բացել քո դիմաց։

Եւ դատախազ, եւ փաստաբան,
Բայց առաւել մեղադրող,—
Վերաբերեցի քեզ ամեն բան
Ու չըզգացի խըղճի դող...

Միայն վերջնում ես արթնացայ...
Բայց ուշ էր դա քեզ համար...
Երբ ես խանդից առողջացայ,
Դու նոյն ցաւով մահացար...

Սեաճ Եաիսի

ԲԺՇԿԻ ԵՐԱԶԸ

—

—Բարև ձեզ, բժիշկ,—ասաց կմախքը՝ ննջարան մտնելով և ատամները կրճատացնելով։—Ձէ՞ք ճանաչում ինձ։ Ձեզ մօտ բժշկող Ցովհաննիսեանն եմ, տնցեալ տարւայ ձեր յաճախորդը... Ինչպէ՞ս է ձեր առողջութիւնը, Թոյլ տւէք սեղմել ձեր ձեռքը։

—Բայց որքան փոխւել էք... Ճշմարիտ, ես ձեզ չէի ճանաչիլ։

—Այնպէս է, չէ՞։ Սաստիկ նիհարել եմ... Դրա համար էլ, պարոն բժիշկ, մենք խմբով եկել ենք ձեզ մօտ։

—Ո՞վ էք դուք։

—Ձեր երախտագէտ հիւանդները... Էյ, պարոններ, մտէք։ Բժիշկն ընդունում է։

Եւ կմախքների ամբոխը թափւեց ներս, ոսկորներն իրար զարկելով։

—Պարոններ, ներողութիւն, — նկատեց բժիշկը,—ես այստեղ դիահատական կաբինէտ չունիմ։

—Հա-հա-հա... Սրախօսում է,—ծիծաղեցին կմախքները, ատամները լայն բացելով։ Եկէք դրա համար էլ սրան մի լաւ խուտուտ անենք։

Եւ կմախքները բժշկին ամեն կողմից շրջապատեցին և ոսկր մատներով սկսեցին նրա կոնատակերին խուտուտ անել։

—Բաւական է, բաւական է,—գոռում էր բժիշկը, ես կըվերադարձնեմ ձեր ինձ տւած այցեդրամները։ Ես մեղաւոր չեմ։ Ես չեմ խախտել բժշկական գաղտնիքները և արհեստակիցներիս չեմ մատնել։ Բաւական է...

Բժիշկն այստեղ արթնացաւ ու մտածեց.

—Ձպիտի այնքան էլ կուշտ ընթրել... Դեռ էլի լաւ, որ ժամանակ չունեցայ փոդիրը լեռ տալու։

Թարգմ. Գ. Բար.

ՏԱՄԵԼԻԱՆԵԱՑ ՊԱՏԻՐԱՆՆԵՐ
ԴՎԱԼ ՍԱՐԻՑ

1. Մի՛ ունենար այլ աստուած—բացի Մամմոնայից.
2. Մի՛ պաշտիր այլ կուռք—բացի հիւրանոցային սրտաքուստ՝ հրեշտակ եւ ի ներքուստ՝ նեխուած միանձնուհուց.
3. Սուտ մի՛ երդիր—եթէ որեւէ օգուտ չկայ.
4. Սուրբ պահիր կիրակին—եթէ հիւանդ ես ու տկար.
5. Պատիւր ծնողներիդ—եթէ հարուստ են ու ժառանգութեան սպասելիք կայ.
6. Մի՛ սպանիր—եթէ զէնք չունիս.
7. Մի՛ շնար—եթէ գիշեր չէ եւ տեսնողներ կան.
8. Մի՛ գողանար—եթէ հնտեւում են.
9. Սուտ մի՛ վկայիր—եթէ վարձատրութիւն չկայ.
10. Մի՛ ցանկանար ընկերոջդ ունեցածը, եթէ նա աղքատ է, ու մի հրապուրիր նրա կնոջը—եթէ տըգեղ է։

Մարիկ

ԵՐԵՔ ԽՐԱՏ

(Ժողովրդական պատմւածք)

—

Ժամանակին մի մարդաշատ քաղաքում ապրում էր մի բեռնակիր մշակ։ Նա շատ խնայող էր. այդ պատճառով էլ մեծ հարըստութեան տէր դարձաւ։ Գնեց այգիներ, շինել տւեց հոյակապ տներ, բայց և այնպէս ինքը շարունակում էր իր առաջւայ արհեստը--մշակութիւն էր անում։

Համաքաղաքացի մի ծեր հարուստ մի օր գնում է շիշերով մեծ քանակութեամբ թանկագին խմիչքներ, լցնում է մի մեծ արկղի մէջ, կանչում է առանձնապէս այդ հարուստ մշակին և առաջարկում է արկղը մինչև իրենց տունը հասցնել։

—Այս բեռը ձեր տունը տանելու համար ինձ ի՞նչ կըվճարէք, տէր.—ասում է բեռնակիրը։

—Որդիս, այդ բեռը տանելու համար քեզ դրամ չեմ վճարի, այլ քեզ հանդերձ հին երեք հատ օգտակար խրատ կըտամ։

Բաւական մտածում է բեռնակիրը այդ առաջարկի վրայ և վերջը համաձայնւում է, շալակում է ծանր բեռը և միասին առաջ են շարժւում դէպի ծեր հարուստի բնակարանը։ Երբ բաւականին ճանապարհ գնում են, բեռնակիրը ցած է դնում բեռը համբերատանալու համար և ասում է հարստին.

—Ասա, տէր, առաջին խրատը։

—Որդիս, առաջին խրատս այն է որ՝ եթէ ամբողջ աշխարհը ասելու լինի, թէ ոտքով գնացողը ձիաւորից լաւ է, չհաւատաս։

Երկար մտածում է բեռնակիրը հարուստի այդ առաջին խրատի մասին, վերջը նորից շալակում է թանկագին խմիչքներով ծանր բեռը և առաջ է շարժւում։

Երկրորդ անգամ բեռնակիրը ցած է դընում հանգստանալու համար։

—Ասա, տէր, երկրորդ խրատդ։

—Որդիս, եթէ ամբողջ աշխարհը ասելու լինի, թէ աղքատը հարուստից լաւ է, մի հաւատա։

Դարձեալ բեռնակիրը բաւականին մտածում է հարուստի այս երկրորդ խրատի վրայ, յետոյ շալակում է բեռը և առաջ է շարժւում։ Հասնելով հարուստի տան բարձր պատշգամբի աստիճաններին, բեռը ցած է դնում։

—Ասա, տէր, վերջին խրատդ։

—Որդիս, վերջին խրատս այն է, որ եթէ ամբողջ աշխարհը ասելու լինի, թէ յիսարը խելօքից լաւ է, չհաւատաս։

Լսելով այս վերջին խրատը, մշակը լուռ վերցնում է բեռը և սկսում է պատշգամբի աստիճաններով վեր բարձրանալ. հասնելով ամենաբարձր աստիճանին նա պատշգամբից թանկագին խմիչքներով բեռը ցած է գցում բակը։

—Այս ի՞նչ արիր, ասում է ծեր հարուստը, միանգամայն զարմացած այդ անակնկալի առաջ։

—Տէրս, եթէ ամբողջ աշխարհն ասի քեզ, թէ այնտեղ ցածումը մի հատ ողջ մնացած շիշ կայ, չհաւատաս. ասում է բեռնակիրը հանգիստ ձայնով և գնում իր գործին։

Ժերմէն

ԽՈՒՆԱՐՀ ԷԶԸ

—

Մի օր երեք հարիւր բուբլի էր հարկաւոր ինձ ու վիզս պարտքի լուծի տակ պիտի դնէի։ Քիչ մարդ է այսպիսի լուծից փախչում. առաւել ևս քիչ են նրանք, որոնք աժան են տալիս այդպիսի լուծը...

Ջնայելով առաջարկածս ծանր տոկոսին, փողատէրը երաշխաւոր էր պահանջում։ Ու ամենադժւարն այդ էր...

Իմ դարդը յայտնեցի մի խումբ տիկիններին։

—Մի երաշխաւորն ի՞նչ է, չորսը կըճարեմ քեզ համար, ասած տիկիններից մինը։

—Էյ, յիմա՛ր, կնոջս սպանեցիր՝ ոչինչ չասի, հիմի էլ ուզում ես դրամարկղը կոտրե՞լ—Թո՛ղ թէ չէ՞ հոգիդ կըհանեմ—

Օդաչուական վախ

Պարոնը, *(տեսնելով վերևից ներքև սլացող գողի ոտքերը).— Արդեօք օդաչուն չի վեր ընկել մեր տանիքին և այնտեղից այստեղ։*

Ռէալիզմ.

Կինը.—*Այդ ինչ ես անում այ մարդ. ինչ կըլինի վերջ ի վերջոյ։*

Մարդը—*Դատարկ շիշ՝—երեխին։*

Եւ յիրաւի, մի կէս ժամ յետոյ, ընդարձակ դահլիճի բոլոր կողմերից սկսեցին դէպի ինձ գալ—ինչ մէկ, ինչ երկու—միանգամից չորս հինգ պարոն, աշխատելով խլել ինձ իրար ձեռքից...

Քաղաքատնտեսութիւնից միայն պարոր վերցնելն է միտս մնացել, այդ պատճառով չեմ յիշում Ադամ Սմիթը թէ Գօրդիոնն է ասել—գուցէ և մի ուրիշը, այն որ, երբ երկու գնողին մի իր է դալիս, այդ իրի գինը բարձրանում է. հակառակ դէպքում, այսինքն, երբ երկու իրին է մի գնող գալիս, իրի գինը ընկնում է...

Այդ օրէնքի հիման վրայ ես թանկացել էի։

Բայց նաղ անելու տեղը չէր, որ նշանակում է, թէ, ընդհակառակը, շատ էի ժամանացել. ուստի աչքերս խուփ արի ու մուշտարիներիս մէկի թևից բռնեցի։

Սա եղաւ իմ երաշխաւորս։

Երբ բարեսիրտ տիկնոջը, իր կրած նեղութեան համար, յայտնել էի շնորհակալութիւնս, մին էլ յետեւից կանացի մի ուրիշ ձայն լսեցի, թէ՝

—Պարոն չմոռանաք, որ ձեր երաշխաւորին ես եմ ծանօթացրել ձեր բարեկամուհու հետ։

—Շատ շնորհակալ եմ։

—Եթէ դուք մեր տանը եղած չլինէիք, հազիւ թէ ինքներդ ծանօթ լինէիք երաշխաւորի հետ, ասաց մի ուրիշ տիկին երկրորդին, այսինքն նրան, որ իմ բարեբարուհուս ծանօթացրել էր երաշխաւորիս հետ. ու ապա դառնալով դէպի ինձ.

—Պարոն, ձեր երաշխաւորն իմ եղբայրն է.

—Շնորհակալ եմ։

—Իմ Կօլեաս միշտ այդպէս բարի է, գթասիրտ, ասաց երաշխաւորիս մայրը, դէպի ինձ դառնալով։

—Շնորհակալ եմ։

—Հաւատացէք պարոն, որ եթէ Կօլեան մերժել էր ընդունել երաշխաւոր լինել, ես ուրախութեամբ յանձն կառնէի այդ պաշտօնը։

—Շնորհակալ եմ։

—Ես նոյնպէս, ես էլ, ես էլ չէի մերժի...

—Շնորհակալ եմ։

—Շնորհակալ եմ։

—Շնորհակալ եմ...

—Շնորհակալ եմ, շնորհակալ

Դանողից էլ,
Լսողից էլ,
Տեսնողից էլ,
Քրոջից էլ,
Մօրից էլ,
Հօրից էլ,

Հարեւանից էլ, կրկնում էի ես տիրացուի պէս, պատից պատ, անկիւնից անկիւն վազվզող շրջելով, սղմելով հիւրերի ձեռքերը, առանց որ սրանց կողմից առիթ լինէր, ինքնաբերաբար, խոնարհութեամբ...

—Այս պարոնը պիտի որ ցնդած լինի, ասաց մի շեկահեր օրիորդ իր կաւալիերին, իմ մասին խօսելով։

—Շնորհակալ եմ, պատասխանեցի ես օրիորդին, սրա առաջը գալով...

Ու ես, քրոնաթոր լինելով, պիտի նախանձէի առածէ այն էշին, որի խոնարհութեան պատճառով երկ-երկու էին հեծնում վրան.—դահլիճնումն, այն ինչ, բառասուն մարդ կար։

—Շնորհակալ եմ, ասում եմ այդ օրից ամէն պատահողի...

—Շնորհակալ եմ, կրկնում եմ այժմ կարդացողներին... այս պատմութիւնը լսելու համար...

Դէս-Դէս

* * *

Սիրոյ, տենչանքի
Վերջին թոյլ կայծն է մեռնում իմ սրտում.
Այրող հեշտանքի
Վերջին ալիքն է մարում ի՜՛ն, տրտո՜՛ւմ...

Անուր տանջանքի
Ովկեանից գիտեմ, յոյսեր չեն ծնում
Մատաղ հասակի
Վարդ երազները կրկին չեն յառնում,—

Բայց սիրտս անուշ
Նորի՞՛ց կրյուզէր, նորի՞՛ց կրթնդար,
Եթէ մի ընդո՜՛ւյ
Ու արտանց սիրող ընկե՛՛ր ունենար...

Ա. Խոնդկարեան

ՑԱՌԻՏԵՆԱԿԱՆ ՀԵՇՄԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ

—

1. Էշին ուր ուզում ես քշիր ձի չի դառնայ։
2. Աւելի լաւ է էշ քշել՝ քան թէ ինքն իրան իբրև բեռը տանել։
3. Ով իրան էշ կըշինէ, ամէն հասնող կընստէ։
4. Իշին մի անգամ են սառցի վրայ քշում։
5. Էշն ու սոխակը միշտ աններդաշնակ կերգեն։
6. Էշը մօր փորումն էլ բոզ (մոխրագոյն) է լինում։
7. Էշին քոթակը կըսազի։
8. Էշին ձեռնտու չէ առուծի հետ խնդալ։
9. Զարմանալի կըլինէր, եթէ էշը էշին քշէր։
10. Երկու ոտանի էշեր էլ շատ կան։
11. Երբ երկու էշ իրար սովրեցնեն, ոչ մէկն էլ բժիշկ չի լինի։
12. Էշի պոչից մաղ չի շինուի։
13. Ձեռաց գժութիւնն էլ լաւ բան է։
14. Ընկնելն ամօթ չէ, ամօթ է ընկած մընալը։
15. Գրիչը (փետուր) կառավարում է, էնդուր էլ գլխարկի վրայ են ցըցում։

ՊՈՂԱՆԹ ՏԵՐԵՒՆԵՐ

—

1. Բոցավառ ոգի.

Ծեր ամուսինը.—Ես տեսնում եմ, որ դու ինձ չես սիրում և երբէք էլ չես սիրել։

Զայրոյթ կինը.—Իսկ եթէ ես քեզ, իմ սիրելի ծերուկ, սիրեի երիտասարդական ամբողջ սիրով՝ դու վաղուց մոխիր կըդառնայիր...

—

2. Արբեցողին չեն սիրում...

—Սիրելիս, թոյլ տուէք արբենալու ձեր սիրով։

—Ներեցէք, ես արբեցողներին ատելով ատում եմ։

—

3. Ճիշտ ձիւտկերպումն.

—Սիրելիս, ես քեզ սիրելու եմ մինչև մահուան բոպէն։

—Ո՞ր մէկիս մահուան. իմ թէ քո։

—

4. Անբուժելի ցաւ.

—Ես սիրահարուած եմ, պարոն բժիշկ,—ասում է մի երիտասարդ կին։

—Ես մեղաւոր չեմ,—պատասխանում է բժիշկը։ Սէրն անբուժելի հիւանդութիւն է և... մեր ուժերից վեր։

—

5. Թանգն ու էժան.

—Ինչո՞ւ այժմ «բախտաւոր ամուսնութիւնների» թիւն այնչափ բիչ է։

—Որովհետև այժմեան ամուսիններն իրար շատ թանգ են գնահատում, իսկ ամուսնական կեանքը՝ շատ էժան...

—

6. Խօսք եւ գործ.

—Ուզում եմ ազատ լինել, այնպէս ազատ, որ ոչ ոք ինձ չճնշէ,—ասում է կինը։

—Այո՛, ազատ... իսկ կրնաս այնուամենայնիւ կրում ես,—պատասխանում է ամուսինը։

Համայնացրեց՝

Եզրոպ Ծայրայեղ վարդապետ

ՁԿՆԵՐԴՈՒԹԻՆ

Դոն-ժուան Լոքոն ու
Ճանաոը լացան—
Ովկեանի խորքում
Բարեկամացան,
Ու կացան-կացան,
Ինչ ասել կուզէ,
Սիրահարուեցան,
Կախ էլան իրար
Դնչից ու պնչից,
Լուռ առանձնացան
Եւ էլ իրարից
Զոկուել չուզեցան.

Տէրտէր կանչեցին,
Իրար պսակեցին,
Ու աղաչեցին,
Պսակել իրանց.
Բայց արգելելով
Տէր-Կուտումը թաց
Ասաւ—«չհաս է,
Եւ օրը պաս է,
Եւ թէ զայրացած
Էօլը նրանց
Մեղաւորների
Շարքը կը դասէ».

Եւ գլուխն առաւ
Լոքոն պուկ արաւ
Դէպ հեռուն մի օր,
(Նշանուած դեռ նոր)
Թողնելով ի յուշ—
Մի համբոյր անուշ,
Ստեր ու հառաչ...
Լող տուեց առաջ,
Գտնելով այնտեղ՝
Տառեխին անմեղ,
Նոր սիրով տարուած
Գնաց ու մնաց...

Եւ աչքը ճամբին
Ճանաոը հեծ-հեծ
Նրան ցաւագին
Մի նամակ գրեց.
Ասաւ—«այ անգութ,
Ուտեմ ես քո տուտ,
Ի՞նչու թողիր ինձ
Կարօտ քեզանից.
Դարձիր, կամ տար ինձ
Շուտ... օ սիրուն ձուկ,
Ես քեզ կը լինեմ.
Հաւատարիմ զոյգ».

Ու պատասխանեց
Լոքոն մեղապարտ
Իր չարաճքճի
Էգին թէ—«աղջի՛,
Ինչ անեմ... զորթ է
Ես սիրում եմ քեզ,
Բայց ցեղդ խորթ է,
Ու թուլամորթ է...
Համ էլ կասեմ քեզ—
Որ այլ ձկանց պէս,
Ընտանի կեանքի
Պէտքական չեմ ես։

Գնա, ուզում ես
Ուրիշին գտիր,
Ու հետը կապուիր
Տեսականապէս,
Եւ այնուհետև
Այսպէս թէ այնպէս,
Քոնը կը լինեմ ես
Նորից ծածկապէս...
Ես ազնուաբար
Երդւում եմ ձկնաբար
Իմ թաց-թաց ոսկով
Ահագին ոսկով...»

Եւ Ճանաոն առաւ,
Թէև քիչ պառաւ
Աժդահա Կետին,
Մտքերով յետին,
Եւ այնուհետև
Թեթև, հոլաթև
Լողաց առ Լոքոն,
Խիստ ուրախացաւ,
Շատ տեղեր ծածուկ
Ձկնկիթ ածաւ,
Բայց Կետը խղճուկ
Շատ ուշ իմացաւ։

Ու երբ իմացաւ—
Դողաց զայրագին,
Գլուխն ահագին
Օդը վեր հանեց,
Ծովի ալեկոծ
Ալիքներում հոծ—
Ցայտուններ նետեց
Ոնգից լայնաբաց
Ու լողաց, լողաց,
Ջայնելով—Հովտի
Մի юрист-ի կերպ—
Դէդաս ուտիրէք.

Եւ պոչի ուժգին
Զարկերով ծեծեց,
Ու հեռուն նետեց
Սիրահարներին.
Հատ բեխով բզեց,
Ցետոյ գզգեց...
Դիեր էլ պահեց
Քարոտ մօտերում—

ՓԵԼԻԷՏՕՆ

ՎԵՐՓՐՊԵՏԻ ՅԻՇԵՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւն)

—

29 օգոստոսի

Զփլախ գիւղի հոգաբարձութիւնից այսօր հրաւէր ստացայ։ Զէ, ինչպէս երևում է Շվէյցարական մանկավարժութիւնը ունեցաւ իր հետևանքը։ Բայց չպիտի վռազել։ Իսկոյն կը գրեմ նրանց, որ ես ինչ ինչ հանգամանքներից ստիպած մի քիչ պիտի ուշանամ. գուցէ մինչև սեպտեմբերի 15-ը աւելի լաւ տեղերից հրաւիրեմ, աւելի մեծ առիթով։ Զարմանալին այն է, որ Մարգօս վախենում է վարժուհի լինելուց՝ պատճառաբանելով, որ կեղծիքը կը բացւի։ Եթէ նա իր ասածին մնայ, մի քիչ բանս կը դժուարանայ։ Բայց յոյս ունիմ, վերջը կը համոզուի։

—

1 սեպտեմբերի։

Այսօր ուսուցչական միութեան գրասենեակումն էի։ Զարմանալի մարդիկ են այդ դիպլոմաւոր վարժապետները։ Նրանք ինձնից աւարտման վկայական են պահանջում։ Դիմա, ես էլ իսկոյն ներկայացրի, հօրն ողորմի, այնպիսի ստեր ասացի, որ բոլորի բերանն էլ բաց մնաց։ Տեղ կայ, որ մի սուտը հազար զորթից արժէքաւոր է։ Եւ նրանք իմ թեկնածութիւնս դրին առաջնակարգ ուսուցիչների ցանկի մէջ։ Կամ եթէ ուղիղն ասենք, այդ դիպլոմաւորները ինչով են ինձնից առաւել։ Ոչնչով. և ես այդ կապացուցանեմ երկրաչափական կանոններով։

2 սեպտեմբերի

Մարգօս արդէն մտաւ իր դերի մէջ։ Ուսուցչական միութեան վարչութեան անդամներն արդէն բերնի լորձունքն սկսեցին կուլ տալ։ Բոլորն էլ հետաքրքրուեցին Մարգօս գեղեցկութիւնով։ Մինչև անգամ նրանցից մէկը խոստացաւ քաղաքում տեղ գտնել երկուսիս համար։ Ես հասկացայ նրա միտքը։ Նա ցանկանում է սիլի-բիլի սկսել Մարգօս հետ։ Վնաս չկայ։ Պաշտօնն ստանալուց յետոյ ես նրան ցոյց կը տամ, թէ այծերն ինչ են անցնում փարախի դռնով։ Եւ ամեն ինչ շահագործւում է կեանքի մէջ։ Եւ զուր չէ, որ մեր առևտրականները սիրուն կանայք են պահում իրենց խանութներում։

4 սեպտեմբերի

Այսօր գնալով խմբագրութիւն յայտնեցի, որ գիւղից թղթակցութիւններ պիտի գրեմ և այն էլ միայն իրենց թերթում։ Նրանք արդէն որոշեցին, որ ես իրենց կուսակցութեանն եմ պատկանում։ Ինձ էլ այդ էր հարկաւոր։

Եւ դեռ կան մարդիկ, որ պնդում են թէ դպրոցները ազատ պիտի մնան կուսակցական պայքարից։ Ինչպէս երևում է, այդ պարոնները օդի մէջ են ապրում։ Կեանքի մարդը այդպիսի ողորմելի միտք չի ունենալ։ Եթէ ուզում ես գոյութեան կուռում

ეროვნული ბიბლიოთეკა

Ծովախոտերում,
Ինքն էլ բունըւեց.
Բայց... քաւ է... խեղճ կնա...
Այստեղ վերջակէտ։

Մարիկ

ԹԱՓԻԱԾ ԾԱՂԻԿՆԵՐ

—

1. Մօդայասէր կինը.

—Ի՞նչպէս հաւանեցիք պիէսը։

—Ճշմարիտ, չեմ սիրում հին պիէսները. այնտեղ շորերը բոլորն էլ հին ձևի են. ոչ մի նորութիւն. ուղղակի անտանելի է։

—

2. Թատրոնի գրասենեակում.

Ծառայողը.—Պարոն կառավարիչ, «Մըկ-բատ»-ի հեղինակ-դրամատուրգը եկել է և նոր պիէս է բերել։

Կառավարիչը.—Ասացէք նրան, որ անցեալ անգամ խաղացւած պիէսի թողած քնարեր տպաւորութիւնից դեռ չեմ արթնացել։

—

3. Փոքրիկ առեւտրականը.

—Լսի՛ր, ա՛յ տղայ, դու սունկը հաւաքում ես՝ առանց իմանալու, թէ ո՞րն է նրանցից թունաւորը, որը լաւ։

—Այո՛, բայց չէ՞ որ ես ուտելու համար չեմ հաւաքում. ծախելու համար է...

—

4. Գիշերուա՞յ թէ՞ ցերեկւայ.

Հարբածը կանգնած է քաղաքային տան մեծ ժամացոյցի առաջ, նայում է շեշտակի վրան և հետն էլ իր ժամացոյցի սլաքները յետ ու առաջ տանում, իբր թէ ուղղում է։

—Տասներկուսի կէսն է, բայց գիշերւա՞յ թէ՞ ցերեկւայ՝ չի երևում։

—

5. Բժշկի կարիքը.

—Շատ վատ տեսք ունէք։ Ձեզ հարկաւոր է բժշկի հետ խորհրդակցել։

—Ինչի՞. կեանքն ինձ համար անտանելի է դարձել։ Ո՞ւզում եմ մեռնել։

—Դուք ուզում էք մեռնե՞լ։ Ա՛յ, հէնց դրա համար էլ դուք պիտի բժշկին դիմէք։

—

6. Ինչպէս է անցնում ժամանակը.

(Ըստ Շէքսպիրի)

Սովորական մարդու համար.—Նա գնում է քայլ առ քայլ։

Պարտապանների համար. — Նա վազում է։

Սիրահարւածների համար.—Նա ցատկում է։

Ձանձրացող աղջիկ-պարոնի համար.—Նա անշարժ իր տեղը կանգնած է։

—

7. Ինչ է կինը.

(Փիլիսոփայական էտիւդ)

Կինն այնպիսի մի արարած է, որ եթէ նրան ծեծես՝ նա կըսկսի փնտռել այնպիսի մէկին, որը նրան չի ծեծիլ. իսկ եթէ նրան չծեծես՝ նա կըսկսի փնտռել այնպիսիին, որը նրան կըծեծի։

Համայնացրեց՝

Եզրաս Ծայրայեղ վարդապետ

ԾԵՐԻԱԾ ՍՐՏԻՑ

Ես չնաշխարհիկ
Մի կին եմ հեզիկ,
Բայց մարդս մեռել
Որբ եմ մնացել։

Կուզէի նորից
Նոր ամուսնանալ.
Եւ նոր սկզբից
Սիրոյ յոյզ զգալ։

Կուզէի սիրել
Նրան միմիայն,
Ով իմս լինէր,
Ա՜խ, անդաւաճան։

(Ծանօթութիւն)

Ես ունեմ երեք
Կենդանի օժիտ,
Որոնց կըսիրէք,
Երեքն էլ աղջիկ։

Խենթ

Մ Տ Ք Ե Ր

(Ուրը տողերկից)

—

❦ Արժէ՞ միթէ, որ մարդ ինքն իրան սպանէ մի կնոջ համար, երբ աշխարհը լիքն է անթիւ կանանցով։

❦ Սիրած կինը՝ տիրուհի է, սիրող կինը՝ ստրկուհի։

❦ Կնոջը գեղեցկութիւնը տրւած է նրա միւս բոլոր պակասութիւնները ներելու համար։

❦ Կնոջ ժպիտի մէջ աւելի շատ միտք

պահովել ստամոքսիդ պահանջները, պէտք է ունենաս յարմարւելու ընդունակութիւն ու ճկուն յատկութիւն։ Մեր ամենամեծ գրող Լէօն, որ երէկ մածնին սպիտակ էր ասում, այսօր էլ սև՝ նրան ո՞վ է դատապարտում։ Ամբոխի համար հաստ ու բարակ մի գին է։ Պէտք է հասկանալ այդ ամբոխի հոգեբանութիւնը և դու կուշտ ես։

Անուն ձեռք բերելու համար ես նախ ոտանաւորներ կըգրեմ։ Երկաթը տաք տաք կըծեծեն, ասում է առածը։ Իսկոյն պիտի անցնել գործի։ Թեմական դպրոցում բանահիւսութեան ուսուցիչը ասում էր, որ բանաստեղծութիւնը արժէքաւոր է միայն այն ժամանակ, երբ նրա մէջ կայ արիւն, մորթերի սաւառնում և գեղարւեստական պատկերաւորում։

Փորձեմ այդ ձևով գրել։ Նախ անհրաժեշտ է քիչ մտածել։ Բայց ոչ, կարիք չկայ գըրան։ Արդէն նիւթը կայ։

—Ով լուսի՜ն, լուսին
Նստեմ քո ուսին,
Որ ես միշտ ժպտամ
Քեզ հետ միասին։

Եւ պէտք է միշտ ժպտալ և ոչ թէ լալ հայ բանաստեղծների նման։ Եւ ես միշտ պիտի գրեմ այդ ուղղութիւնով։

Եւ ես կըլինեմ առաջինը, որ հայ բանաստեղծներից կըզանազանւեմ իմ կենսուրախութիւնով։

Նայիմ քո ուսից
Դէպի կանաչ դաշտ,
Դէպի սարերը
Երկնքի հետ հաշտ։

Երկնապաչ Մասիս
Ճերմակ սաւառնում,
Ուր արիւծներն են
Անվերջ սաւառնում։

Ներքև աշխարհում
Մարդիկը գազան,
Իրար են պատռում,
Ինչպէս գայլ վազան։

Իսկ ես քո ուսից
Ով լուսին փարոս,
Կանչեմ խեղճերին
Եկէք հոս, հոս, հո՜ս...

Հապա մի նորից կարդամ։ Հրաշալի է։ Ինչպէս երևում է ես ձիրք ունեմ։

10 սեպտեմբերի

Ոտանաւորս տպագրւեց։ Խմբագրատանը խոստովանւեցին, որ ես տաղանդ եմ։ Եւ այլ կերպ էլ լինել չէր կարող։ Ինձ խորհուրդ են տալիս գնալ արտասահման ու կատարելագործւել հասարակական գիտութիւնների մէջ։

Եւ այդ անշուշտ պէտք է իրագործել։ Անհրաժեշտ է մի երկու տարի փող ժողովել և դիպլոմը պատրաստ է։ Բայց ես ուզում եմ անպատճառ փիլիսոփայութեան դօքտորի տիտղոսը ձեռք բերել, որովհետև անհրաժեշտ է ինձ նման գրողին ունենալ սեփական օրգան։ Թերթիս անունը կըդնեմ «Դարդուբալա», չէ սա պրօզայիկ է, աւելի լաւ է դնել անունը «Արշալոյս»։ Եւ այդ անունը շատ էլ յարմար է, որովհետև հայ գրականութեան մէջ անտարակոյս այդպէս էլ պիտի լինեմ։ Ես ահա երրորդ օրն է սկսել եմ վէպ գրել։ Աստւած իմ, ինչպէս

կայ, քան նրա արցունքների մէջ։

Ոսկէղարն այն ժամանակ կըհասնի, երբ ոսկին այլ եւս չի լինի։

Համայնացրեց՝

Եզօպ Ծոյրայեղ վարդապետ

ԹԱՏՐՈՆ

I

ՀԱՒԼԱԲԱՐԻ ԹԱՏՐՈՆ

—

Կիրակի, ամսիս 19-ին Խարազեանի թատրոնում ներկայացրին Օստրօգօրսկու «Ցրինի» վէպից փոխադրած Մարգարեանի «Սուլէյման Բ.» դրաման 5 գործ. 6 պատկ. պիէսը։

Փոխադրող պ. Մարգարեանին թէև անձամբ չեմ ճանաչում, բայց ինչպէս պատմում են նա ծնւել է իրեն հարազատ մօրից և վէպը փոխադրելուց 10 տարի առաջ եղել է Ղարս, որտեղ Ղալայչի Մարգարի մօտ կլէկչութիւնով է պարապելիս եղել։

Երեք ամսւայ չափրղտնան չստանալու պատճառով Ղալայչի Մարգարի մօտից դրամատուրգ Մարգարեանը ծլկւում ու գնում է Բագու Գէօզալ Աղդրաչուն փախցնելու համար, բայց բարեբախտաբար չի աջողւում։

Բագւից անցնում է Պարսկաստան, Պարսկաստանից Տաճկաստան և 3 գիշեր մնում է Աբդուլ-Համիդի հարեմում։

Աբդուլ-Համիդից սիրալիր կերպով հրաժեշտ տալուց յետոյ պ. Մարգարեանը Տիգրան Նազարեանի հետ ճանապարհւում է դէպի Անգլիա՝ Թագաւորի թագադրութեանը ներկայ լինելու, սակայն, որովհետև Աբդուլ-Համիդի ղալյանը մոռացած է լինում Գերմանիայի կայսրի կաբինետում, ուստի թագադրութեան հանդէսը կիսատ թողած՝ սուլթանի խնդրանօք գնում է Գերմանիա ղալյանը բերելու։

Գերմանիայի կայսրը Մարգարեանի մէջ դրամաներ գրելու առանձին ձիրք նկատելով, խնդրում է դրել Տաճկա-գերմանական պատերազմին վերաբերող վերոյիշեալ «Սուլէյման Բ.» պիէսը։

Մարգարեանը երբ Գերմանիայից վերադառնում է Թիֆլիս, հէնց այդ ժամանակները սկսւած են լինում հայ-թիւրքական կոտորածները։

Պ. Մարգարեանը մի կողմից այդ կոտորածների ազդեցութեան տակ, միւս կողմից էլ պարապութիւնը ստիպում են նրան կատարել Գերմանիայի կայսեր թախանձանքը։

Սա է Մարգարեանի համառօտ կենսագրութիւնը, չակերտների մէջ։

Պիէսը մեծ յաջողութիւն կունենայ, եթէ հանդիսականները լինեն Պարսկաստանի բախտիարները կամ թէ Տաճկաստանի համշարիները։

Այդ պիէսը մանաւանդ մեծ դեր կարող է կատարել անզգամհատութիւնների ժամանակ, որովհետև շատ յաջող կերպով բընացնում է մարդկանց. իսկ քնելը անզգամհատութեան ամենակարեւոր պահանջներից մէկն է։

Փարեմուզ

II

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

—

Հինգշաբթի, սեպտեմբերի 22-ին Հայոց Դրամատիքական ընկերութեան թատերասէրների խումբը դեղասամնէլի մասնակցութեամբ ներկայացրեց Շիրվանզադէի «Եւգինէ» դրամա 3 գործ. և Սունդուկեանի «Գիշերւայ սաբրը խէր է» վօդևիլը 1 գործ.

Եւգինէի դերը կատարում էր տիկ. Դուրեան—Արմէնեան. նա ներկայացրեց մի խակական կնոջ, որին հոգեպէս տանջում էր ամուսնուն դաւաճանելու չարագուշակ եղելութիւնը։

Բայց Արմէնեանը (Միհրան Ալվերդեան) ներեց իր ամուսնուն։ Նա որքան բարեսիրտ է եղել. դա երկրորդ օրինակն է որ պ. Արմէնեանը ցոյց է տալիս դէպի այնպիսի մարդիկ, որոնք իրենց արածին հաշիւ չեն տալիս։

Առաջին օրինակը նա ցոյց տւեց դէպի Դրամատիքական ընկերութիւնը, որը իրենց թանը չը թթւացնելու համար, որոշել է ոչ մի դէպքում թոյլ չը տալ իրենց դերասաններին մասնակցելու ժողովրդական տան հայկական ներկայացումներին և «Հորիզոնի» խմբագրութեան։ Էլ խնդրել է «Սուրհանդակ»-ի նման չը բողոքել այդ մասին։

Պ. Տէր Գրիգորեանը վօդևիլի մէջ Օսկան Պետրովիչի դերում Շիրաջխանի ուսած ասւմբու էր նմանում, որին եթէ Մախաթի սարից գլորէիր խօլերի բարակները մի մինչև շնչում կը հասնէր։

Օր. Թարխանեանը կարծես թէ ստեղծւած լինի Հաւլաբարի ձայնների դերը կատարելու։ Բայց այս անգամ ինչպէս երևում էր, օրիորդը դերը լաւ չէր իմանում, որովհետև փխ սիրահարւած ինկների նման աչքը սուֆլօրից չէր հեռացնում։

Առաջին գործողութեան ժամանակ պարտերը դատարկ էր, իսկ պատշգամբը լիքը. բայց երրորդ գործողութեան միջոցին հակառակ պատկերը ներկայացրեց։

յաջողւում է ինձ վիպասանութիւնը։ Խըմբագիր հրատարակիչ «Արշալոյսի» փիլ. դօք. Ս. Զաւկուլեան, իսկ հասարակութեան բերնում՝ բանաստեղծ-վիպասան փիլ. դօք. Սեդրակ Զաւկուլեան։ Եւ իմ յօբելեանը յոյս ունեմ 10-րդ տարում կըկատարեն։ Օ՜, երանի այդ օրին։ Ես ինչպէս նախանձում էի Շիրվանզադէին, երբ իր յօբելեանի օրը բեմի վրայ կանգնած հասարակութեան կուռքն էր դարձել։ Ոչ, ոչ, չպիտի յուսահատւել։ Դէպի գործ։

Ուժեղ կամքի առաջ սարերն անգամ խորտակւում են։ Բայց Մարգօս անպատճառ կըխանգարի։ Ստիպւած եմ նրան թողնել։ Այդ ոչինչ։ Մի երկու երեք տարի ծառայս կառնեմ, այդ էլ բաւական է։ Եւ վերջապէս ամուսնացած մարդիկ են բաժանւում։ Միթէ ես չեմ կարող բաժանւել։ Ես առաջ հաւատացած էի, որ եթէ մէկին սիրես, այլևս չես կարող բաժանւել։ Այդ սուտ է միանգամայն։ Փորձը ցոյց տւաւ այդ։ Այնպէս որ այդ կողմից ես միանգամայն վըստահ եմ։ Բայց զարմանալին այն է, որ դեռ գտնւում են այնպիսի յիմար մարդիկ, որ սիրոյ համար թոյն են խմում, գնդակահարւում, թոկով խեղդւում։ Իմ կարծիքով այդպիսիները՝ աննորմալ մարդիկ են։ Անցեալ օրը մի բժիշկ, յիմարաբար կնոջն ու նրա սիրականին գնդակահարեց։ Նրա հախն էլ է. ինչու է սիրուն կին ուզում։ Անհատարակ բոլոր սիրուն կանայք բարքերի ազատութեան կողմնակից են. և այդ շատ բնական է, որովհետև այդպիսի կանայք անշուշտ բնազդօրէն ցանկանում են կատարելագործւած սերունդ արտադրել։ Իսկ այդպիսի սերունդը ձեռք է բերւում արուների փոփոխութեամբ է ընդհակառակը, ժողովրդական առածն ասում է,—մօրը տեսած աղջիկն առ, հօրը տեսած՝ երիվար։ Այս արդէն ժառանգական օրէնքն է մատնանշում։ Արդէն Մարգօիս հոմանիներն օրն օրի վրայ բազմանում են և հաւանական է մի գեղեցիկ օր ես էլ պոզեր կունենամ։

Եւ ո՞ր կինը կարող է դիմադրել արուների գրոհին։ Այդպիսի կինը՝ բացառութիւն է։ Ուրեմն այս հանգամանքն էլ գալիս է թելադրելու թողնել նրան։ Եւ վերջապէս մի անհատի համար հասարակութեան շահը չի կարելի զոհել։

13 սեպտեմբերի

Զփլախի հոգաբարձութիւնից պարձեալ նամակ ստացայ։ Նրանք վերջնական պատասխան են ուզում։ Այստեղ էլ գործը ձգձգւում է։ Աւելի լաւ է գնալ։ Ինչպէս զարաբաղցիք են ասում, եթէ ոչ, համ Տունավաղի պատարագից կընկնեմ, համ Ճարտարայ՝ հարսանիքից։

15 սեպտեմբերի

Ջեղաւ. պարձեալ գիւղ պիտի գնալ։ Երկուսիս 700 րուբլի են տալիս։ Այդ գումարից 500 րուբլի կարելի է պահել։ Հէրն անիծած. հին խալիֆաների նման ես էլ աշակերտներից ամեն ինչ պիտի պահանջեմ, ձուից սկսած մինչև մածոնը։

Արգար Պայազատ

ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

—Շոֆֆեր, դե՞հ շարունակի՛ր, էլ ինչ ես կանգնել.
—Հարկաւոր է այս ողորմելու դիակը հանել տակիցը գոնէ, որպէս զի բոլորովին չջախջախուի եւ այլանդակուի. չէ որ եկեղեցի կըտանեն, կըթաղեն.
—Ի՞հ, դրա համար էլ մենք մտածե՞նք...

Պարոն Զմշկեանի ասելով այդ բանն առաջ է եղել օդի ազդեցութիւնից։

Ներկայացումը վերջանալուց յետոյ հանդիսականները դուրս եկան թատրոնից և գնացին իրենց տները (երևելի փիլիսոփայութիւն)։

Փարեմուզ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բաց նամակ «Խաթաբալա» թերթի յարգոյ խմբագրին

—

Գանձակի գաւառի, գիւղերից մէկում, Փոքր-Սարովում, կենում էր մի մարդ, անունը Ցական, մի հողագործ մարդ, անչափ ջանասէր, և սուր խելքի տէր։ Շատ եմ ման եկել ես այդ կողմերը. գիտեմ շատ գիւղեր, աղքատ ու անաէր, ուր մարդը չարքաշ, ոչ թէ ապրում է, այլ տանջւում անվերջ. բայց մեր Ցականը, մի ուրախալի բացառութիւն էր...։

Ապրանք ու մալից «տունը տրաքում էր», ինչպէս ասում են գիւղացի հայերը՝ մեր փորձւած պապերն և խելօք հայրերը։

Շատ էի լինում այդ օրհնւած տանը և սուր Ցականը, ամեն, ամեն կերպ, աշխատում էր որ, ինձնից սովորի գիտցածս բոլորը, որ ձեռք եմ բերել և լաւ գրքերից և կեանքի բովից...։

Միջին տարիքով, առողջ, յաղթանդամ, ճակատը միշտ բաց, իրեսին ծիծաղ, սառը ու խօսող, կատակի համար, ինչպէս ասում են, Հեյրաթ գնացող. բարի ու բնքոյշ սիրտ ունէր Ցականը,—ամեն մի րոպէ պատրաստ էր մեռնելու, սրտակից եղբօր՝ լաւ հայի համար...։ Բարեկամացանք ես ու Ցականը և շուտով դարձանք ընկեր անբաժան...

—Բնական խելքը պէտք է զարգացնել—մտածեցի ես, և կամաց-կամաց, գրադարանիս ընտիր գրքերը, սկսեցի կարդալ նոր բարեկամիս—մի օր իմ տանը (ես ապրում էի «Դալի-Մամմադի» կայարանում, որը Սարովից 2 և կէս վերստ է), մի օր Ցականիս—ինչ ասել կուզի, ձմեռը միայն, երբ որ ազատէ գիւղացի մարդը դաշտային գործից...

Մենակ Ցականը չէր, որ լսում էր ինձ.—շատ էին գալիս և ուրիշները, հարևաններից։ Ես կարդում էի զանազան գրքեր մեր ազգի կեանքից, և օտարների, ռուսերէն լեզուն հեշտ թարգմանելով... Եւ կարդում էի և բացատրում գիւղացի մարդկանց խրթին տեղերը...

Ամեն անգամ երբ վերջանում էր ընթերցանութիւնը, ես լսում էի խոր հառաչանքներ, մէկի կամ միւսի զգացւած սրտից։

—Խաւար մնացինք այս լոյս աշխարհում, ասում էր մէկը։

—Խաւար ու տաւար—խոր հառաչանքով կրկնում երկրորդը...

Թէ «մայրը չարհաց» (ծուլութիւնը), մի օր ազատի ինձ իր տաք գրկից—տաք ու մեռցնող, կարճառօտ կերպով կընկարագրեմ, թէ որ հեղինակը, ինչ հետք էր թողնում այդ թշւառ մարդկանց սրտերի վրայ և ուղեղների. իսկ այժմ անցնեմ իմ ասելիքին։

Օրերից մի օր, հետս վերցրի, ի՞նչ էք կարծում, ի՞նչ... Ստիւարտ Միլլի գիրքն իմաստուն, ուր անգլիացի խոր գիտնականը հանճարեղ կերպով, մեր քնքոյշ սեռի, հաւասարութեան իրաւունքների հարցն է պաշտպանում... Եւ ապշելու բա՜ն... գեղջուկ անգրագէտ ու խաւար մարդիկ, մեծ ուշադրութեամբ լսեցին Միլլին և հաւանեցին...։ Ցականի մասին հօ էլ ի՞նչ ասեմ. ոգևորւել էր անչափ, անսահման...։

Խրախուսւելով այդ հանգամանքից, մի օր Ցականին առաջարկեցի, վերջ տալ գիւղական վատ սովորութեան—քէթկալը հանել կանանց երեսից և թոյլ տալ նրանց, և ազատ շնչել և ազատ խօսել...։

—Հա՜, հա՜, հա՜, հա՜, հա՜, հա՜—ծիծաղեց մարդը. ծիծաղեց այնպէս, որ տան կտուրը դողաց ու շարժւեց...։

—Տնաշէնի հա՜յ—գոչեց նա ուժգին—թէ որ պերանը լաւ պերան ինէր, ո՞ր քեօֆէօղլին խօսքիդ «չէ» կասէր... Համմա գիտում ե՞ս, ջանս քէ ղուրբան, մեր կնանիքոնց պերանն ըռռէխա, պեաց արիր թէ չէ, տիւ պէտմա տիւս կիաս, կլօխտ սանիս Հնդաստան փախչես...։ Առաջ պերանը պէտմա լաւ կրթես, յետոյ պեաց անես... Խօսքը հէ՞նց խօսի, որ լեազաթ տանես, տափը չմտնես...

Գեղջուկ ընկերիս խօսքն իմաստուն յիշեցի նորից, երբ «Խաթաբալում» «քիոյնայ» Գէօզալի, իմ մասին գրած երկտողը կարդացի ամառւայ նոմերներում։

Խմբագիր եղբա՜յր, լաւ բան է խօսքը իմաստուն կնոջ, և եթէ տեղ տաս թերթիդ էջերում կրթւած կին-մարդուն, ձեռքդ կըպագնեմ ես առաջինը...։ Բայց թոյլ ես տալիս պոչերը խինած «քիոյնայ» շիրվանցուն, «չարսօվը» հանել, ըռռէխը բացել, և էնպէս խօսել, ինձ վիրաւորել... Եւ եթէ այսօր այդ կերպով ինձ է հայհոյում, ապահովւած չե՞ս, որ քեզ չի ասի նոյնը էքուցւայ օրը...։

Առաջ թող խասիաթը փոխի այդ «քիոյնայ» բաջին, խինէն լւանայ թառամած մարմնից, սաած խօսքերի միտքն իմանայ և այնպէս խօսի նա «Խաթաբալում»... Ո՞հ այն ժամանակ, անչափ հաճոյքով կըկարդամ նրան. ինքը լաւ գիտէ, որ ես մեռած եմ խելօք ու պարկեշտ լաւ կնոջ համար, թէպէտ իրենից պառաւ էլ լինի մի տասը տարով...

Սարգիս Տէր-Զաքարեանց

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԱՍՏԱՌՆԵՐ
ОБОИ

Նորագոյն նկարներով հսկայական քանակով

ՍՏԱՑՒԱԾ Է

Ե. Յ. ԾԱՏՈՒՐԵԱՆԻ

ԴԵՊՕՅՈՒՄ

որտեղ և վաճառ[illegible]մ է գործարանային գներով։

Թիֆլիս Դվորցովաեա փողոց։ 50—38

ԱՐՇԱԿ ՄԱԼԵԱՆՑԻ

ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԶԳԵՍՏՆԵՐԻ

ԱՐՀԵՍՏԱՆՈՑԸ

Գանովսկայա փողոցից ՏԵՂԱՓՈԽԵՑ Երևանեան հրապարակ, Խարազեանի տուն՝ «Кавказъ» թերթի նախկին խմբագրատունը—Առաջին Փոխադ. Վարկի Ընկ. կից։

Արհեստանոցում ընդունւում են պատւէրներ տղամարդկանց ամենաճաշակաւոր զգեստներ կարելու ռուսական և արտասահմանեան ապրանքներից,

Որոնք ստացւում են շաբթէ-շաբաթ՝ և անմիջապէս։

ԳՆԵՐԸ ՄԱՏՉԵԼԻ 0—5

ԲԻՍՏՈՐԱՆ-ՃԱՇԱՐԱՆ

„ԴԻԼԻ ՊՈՒՋՈՒՐ“

Քաղաքի կենտրոնում, ամենայարմար տեղ Թամամշեան քարվանսարայի տակ

ՄԻՇՏ ԹԱՐՄ ՄԹԵՐՔԻՑ

— Եւրոպական եւ ասիական-կովկասեան ճաշացուցակ —

Ընտիր ըմպելիներ, զով կաբինետ-սենեակներ մաքուր խոհանոց ու պատրաստակամ ծառաներ

25—22

Первохл. ресторанъ „АННОНА“

„Зданіе Артистическаго Общества“

Сод. Я. Т Бондаренко Ежедневно отъ 2 час. до 5 час. пополудни и вечеромъ отъ 10 час. до 2-хъ час. ночи. **играетъ вновь приглаш. итальянскій струнный оркестръ, съ пѣніемъ,** г-жи Сакко и Марія Оландезе и баритона Дж участіемъ ндезе, подъ управленіемъ САККО.

ЗАВТРАКИ отъ 11 час. до 1 час. дня 80 к. Обѣды, отъ 2 час. до 6 час. пополудни: изъ 2-хъ блюдъ—60, трехъ—90 к. и четырехъ—1 р. 20 к. Кухня Европейская и Азіятская; билліарды. Имѣются кабинеты. отъ жары можно спасаться только въ

„АННОНѢ“

52—22

Լոյս տեսաւ առանձին գրքով և վաճառւում է

ՆԱՐ-ԴՈՍ

ՊԱՅՔԱՐ

ՎԷՊ

Դիմաց է 75 կոպէկ

Գլխաւոր պահեստը «Գուտտենբերգ» գրախանութում, ուր և դիմում են գումարով գնողները։

10—3

ПАПИРОСЫ

ФАБРИКИ А.ЭНФІАДЖІАНЦА

МАГАЗИНЪ

КОМПОЗИЦІЯ

Тифлисъ, Пушкинскіи пассажъ № 8!

громадная экономія

шведскаго композиціон. бѣлья

Носится не менѣе двухъ лѣтъ

Постоянный большой выборъ свѣжаго товара

ВОРОТНИКОВЪ, МАНИШЕКЪ И МАНЖЕТЪ

По фабричнымъ цѣнамъ

Передѣлка въ любой фасонъ безплатно

Продаются портняжныя принадлежности, как-то пугоицы, подкладки, мѣлъ и впрочѣе.

ИНѢЕТТЯ ТУТЪ-ЖЕ ГАЛАНТЕРЕЙНЫЙ ОТДѢЛЪ

Остерегайтесъ поддѣлокъ и подражаній

Просимъ обратится только Пушкинскій пассажъ № 8

15—4 (о. и.) М. А. КАЛТАКЯНЪ

ԲԺԻՇԿ

ՓԱՆՈ ՄԱՆԴԷՆԵԱՆ

Մասնագիտութիւն՝ ՄԻԶԱՄԵՌԱԿԱՆ, ՎԵՆԵՐԱԿԱՆ և ԿԱՇՈՒ հիւանդութիւններ։

Ընդունում է հիւանդներ իր ծսեփ. տանը ամեն օր առաւ. 9—12 և երեկ. 6—9. Ելիզաւետեան փող. № 28.

0—1

Типографія «Культура» Баронская 14. Խմբ.-հրատարակիչ՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ

ՑՈՎՆԱՆԵԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

—Վարժապետ. հիմի ի՞նչ անինք, ո՞ր ուղղագրութիւնը գործ ածենք։

—Ամեն տեսակ—«ու»-ով գրեցէք, որ մանկավարժ. խորհրդի որոշումը կատարած լինէք, «ւ»-ով՝ որ դասագրքերի հետ համապատասխան լինէք եւ «վ»-ով, որ՝ տեսչի կարգը կատարէք

ԲԱՐԵՄԻՏ ՄԱՑԲԸ

—Ի՞հ, քա՛, դրա համար էլ ի՞նչ ես փիքր անում—խօ գըրտում է. մաշ էլ ի՞նչ։

—Գրում է՝ չէր ուրիշի կինը դար, կօսէ, ու իժում խմը կուլխս, կօսէ։

—Դու էլ էտինց արա զինացալօս դէդէն. ինչ կայ որ, էստի ամօթի բան չկայ. համ մարթ կունենաս՝ համ սրտի բարեկամ—մարմնով պոռոզնիկ։